

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Կայացած՝ 16-ը հուլիսի 2021 թվական

քաղաք Գյումրի

2021 թվականի հուլիսի 16-ին Գյումրու «Օյունջյան» միջնակարգ դպրոց-վարժարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ Շիրակի մարզի խորհրդի հերթական նիստը:

Նիստին մասնակցում էին ՀՀ Շիրակի մարզի թվով 42 համայնքների ղեկավարներից 40-ը, Արևշատ և Հառիճ համայնքների ղեկավարները բացակայում էին հարգելի պատճառով:

Նիստը վարում էր՝ ՀՀ Շիրակի մարզպետ Հովհաննես Հարությունյանը:

Մարզի խորհրդի նիստին մասնակցում էին նաև՝

- մարզպետի տեղակալը,
- մարզպետարանի վարչությունների և բաժինների պետերը,
- զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչներ,
- մարզի բնակավայրերի վարչական ղեկավարներ:

Մարզպետը ներկայացրեց մարզի խորհրդի նիստի օրակարգի հետևյալ նախագիծը՝

1. ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2021 թվականի առաջին կիսամյակի կատարման մասին:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ Լիպարիտ Մարտիրոսյան

2. ՀՀ Շիրակի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ 2021 թվականի առաջին կիսամյակում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և վերջիններիս կողմից կատարված այլ աշխատանքների մասին:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ՝ Արամ Անտոնյան

3. ՀՀ Շիրակի մարզի համայնքապետարանների պաշտոնական կայքերում և ֆեյսբուքյան էջերում տեղադրվող տեղեկատվության օպերատիվության և հավաստիության ապահովման մասին:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի պարտականությունները կատարող՝ Արաքսյա Կիրակոսյան

4. 2021 թվականի առաջին կիսամյակում մարզի համայնքներում իրականացված ծրագրերի մասին:

Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ՝ Կարեն Բաղիշյան

5. 2021 թվականի առաջին կիսամյակում մարզի առողջապահության ոլորտում կատարված աշխատանքների մասին:

Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պարտականությունները կատարող՝ Լեյլի Ասլանյան

Օրակարգի նախագծի վերաբերյալ առաջարկություններ չեղան, օրակարգը հաստատվեց:

Այնուհետև անցան օրակարգային հարցերի քննարկմանը:

ԼՍԵՅԻՆ 1. ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2021 թվականի առաջին կիսամյակի կատարման մասին:

Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ Լիպարիտ Մարտիրոսյան

(Ձեկույցը կցվում է):

Մարզպետը նշեց, որ մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշները գոհացնող չեն, միաժամանակ առաջարկեց համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ցածր ցուցանիշներ ապահոված համայնքների ղեկավարներին՝ միջոցներ ձեռնարկել համայնքների բյուջեների սեփական եկամուտների ապահովման ցուցանիշները բարելավելու ուղղությամբ:

Նաև նշեց, որ կան համայնքներ, որտեղ գանձումները մարզի միջին ցուցանիշից էլ ցածր են: Տարածաշրջանի միևնույն բնակլիմայական, աշխարհագրական և ժողովրդագրական իրավիճակ ունեցող (հարևան) համայնքներում համայնքային բյուջեների սեփական եկամուտների ապահովման ցուցանիշների տարբերությունը պայմանավորված է համայնքապետերի աշխատանքով, միաժամանակ հավելեց, որ ցածր ցուցանիշները բացասաբար են անդրադառնում համայնքների զարգացման վրա, քանի որ միայն սեփական եկամուտների հավաքագրման արդյունքում համայնքը կկարողանա մասնակցել սուբվենցիոն կամ այլ ծրագրերի իրականացմանը, իսկ համայնքներում զարգացում կապահովվի միայն սեփական եկամուտների կատարման բարձր ցուցանիշներ գրանցելով:

Մարզպետը մեկ անգամ ևս հորդորեց սեփական եկամուտների ցածր կատարողականներ ունեցող համայնքների ղեկավարներին՝ շարունակական աշխատանք տանել սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշները բարելավելու ուղղությամբ:

ԼՍԵՑԻՆ 2. ՀՀ Շիրակի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ 2021 թվականի առաջին կիսամյակում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և վերջիններիս կողմից կատարված այլ աշխատանքների մասին:

Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Արամ Անտոնյան

(Ձեկույցը կցվում է):

ԼՍԵՑԻՆ 3. ՀՀ Շիրակի մարզի համայնքապետարանների պաշտոնական կայքերում և ֆեյսբուքյան էջերում տեղադրվող տեղեկատվության օպերատիվության և հավաստիության ապահովման մասին:

Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի պարտականությունները կատարող՝ Արաքսյա Կիրակոսյան

(Ձեկույցը կցվում է):

ԼՍԵՑԻՆ 4. 2021 թվականի առաջին կիսամյակում մարզի համայնքներում իրականացված ծրագրերի մասին:

Ձեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ՝ Կարեն Բաղիշյան

(Ձեկույցը կցվում է):

Մարզպետն առանձնակի կարևորեց սուբվենցիոն ծրագրերի կազմման և իրականացման հարցում տեմպերի ապահովումը՝ ընդգծելով, որ դրանք գոհացնող չեն: Անհրաժեշտ է բացառել ավելորդ ժամանակային կորուստը այս ծրագրերի իրականացման հարցում, աշխատանքները պետք է կատարվեն ամենօրյա ռեժիմով, հետևողական աշխատանք է պետք թե մարզպետարանի մասնագիտական ստորաբաժանումների կողմից, թե համայնքների: Արդեն իսկ ազդակներ ենք ստանում, որ ծավալուն շինաշխատանքների դեպքում մասնագետների պակաս կունենանք, քանի որ նրանց մեծ մասը մեկնել է արտագնա աշխատանքի:

Այնուհետև մարզպետը հորդորեց համայնքների ղեկավարներին մարզում իրականացվող սուբվենցիոն ծրագրերի իրականացման աշխատանքներում առաջ եկած խնդիրներին արձագանքել ժամանակին, հարցերի լուծմանը շատ պատասխանատու մոտենալ և ցուցաբերել սրտացավություն:

Նա միաժամանակ հավելեց, որ բոլոր աշխատանքներում էլ որակն առաջնահերթություն է, առաջարկեց աշխատել մարզպետարանի հետ ամենօրյա ռեժիմով, համընդհանուր խնդիրները լուծելու համար համայնքների և պետության սուղ միջոցները օգտագործել առավելագույնս նպատակային և շարունակական որակյալ ծառայություններ մատուցել համայնքների բնակչությանը:

ԼՍԵՑԻՆ 5. 2021 թվականի առաջին կիսամյակում մարզի առողջապահության ոլորտում կատարված աշխատանքների մասին:

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պարտականությունները կատարող՝ Լեյլի Ասլանյան

(Զեկույցը կցվում է):

Մարզպետն անդրադառնալով կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման նպատակով մարզում իրականացված պատվաստումների տեմպերին, կոչ արեց համայնքապետերին այս հարցում ցուցաբերել նախաձեռնողականություն՝ կարևորելով ազգաբնակչության պաշտպանվածությունը: Նաև նշեց, որ ՀՀ կառավարությունն ամեն ինչ արել է, պատվաստումային գործընթացն անխտընդոտ իրականացնելու ուղղությամբ, մնում է, որ մենք էլ մեր տեղում աշխատենք, որպեսզի բնակչության շրջանում հստակ պատկերացում լինի, որ պատվաստման միջոցով հնարավոր կլինի պաշտպանված լինել և կանխել կորոնավիրուսային հիվանդության ծանր ու մահացու դեպքերը:

Զեկուցումների ավարտից հետո երաշտի հետևանքով մարզի համայնքների բնակիչների կրած վնասերի փոխհատուցման մասին հարց բարձրացրեց ՀՀ Շիրակի մարզի Փանիկ համայնքի ղեկավար Վարդան Մակեյանը:

Հարցին ի պատասխան մարզպետը նշեց, որ երաշտի հետևանքով առաջացած վնասները նախ պետք է ուսումնասիրվեն արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման համայնքային հանձնաժողովների կողմից, կազմվեն համապատասխան փաստաթղթեր ու ներկայացվեն մարզային հանձնաժողով, բացի այդ ՀՀ կառավարության կողմից ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ գյուղացիական տնտեսությունների խնդիրները ուշադրության կենտրոնում պահելու ուղղությամբ, մասնավորապես այդ կապակցությամբ ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետությունում հնարավոր երաշտի կամ սակավաջրության կանխարգելման, դրանց հետևանքների վերացման կամ հնարավոր մեղմման, առկա խնդիրների բացահայտման և օպերատիվ արձագանքման միջոցառումների համակարգման, ինչպես նաև ոռոգման ոլորտի արդյունավետության բարձրացման ռազմավարության մշակման աշխատանքների համակարգման նպատակով:

Այնուհետև ՀՀ Շիրակի մարզի Արփի համայնքի Աղվորիկ բնակավայրի վարչական ղեկավար Նար Ղարիբջանյանը հարց բարձրացրեց արտակարգ իրավիճակների համայնքային պլան կազմելիս համայնքում եղած ռեսուսները պլանով նախատեսված ռեսուրսների քանակին չբավարարելու վերաբերյալ:

Հարցին ի պատասխան ՀՀ Շիրակի մարզպետը մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետին հանձնարարեց հարցի վերաբերյալ կազմկերպել քննարկում՝ խնդրո առարկա հանդիսացող հարցի լուծման ուղղությունները նախանշելու համար:

ՀՀ Շիրակի մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Շիրակի մարզպետ Հովհաննես Հարությունյանը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ**

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ Արման Մելքոնյանը